



ՆԱԽԱՐԱՐ

MINISTER

“.....”..... 201 թ.

..... /

ՀՐԱՄԱՆ N 350-Ա

22 նոյեմբերի 2016թ.

ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱՔԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ 2016 թվականի հոկտեմբերի 26-ին կայացած խորհրդակցության հանձնարարականի 1-ին կետի 3-րդ ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N1049-Ն որոշման N1 հավելվածի 13-րդ կետի 4-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանման աշխատող՝ իր գործառույթների շրջանակում, հատկապես Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության ծրագրի կատարման առումով, գրավոր իրազեկում է իր կատարած ամենօրյա աշխատանքի մասին ստորաբաժանման ղեկավարին, որն էլ ամփոփում է աշխատանքները և ներկայացնում Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանին:

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանին՝

1) հավաքագրել և ամփոփել կատարած աշխատանքների մասին տեղեկությունները և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին.

2) անհրաժեշտության դեպքում ներկայացված նյութերը քննարկել կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ՝ ծրագրի կատարման ընթացքն ապահովելու համար:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒՅԱՆ

